№ 79 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 10 — 1908 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 10 № 79

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւր քան իւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, ապրիլի 7-ին, առաւօտեան ժամը 11-ին վախճանվեց

Թագուհի Անդրեասեան ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԸ

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հարազատները—Զանազան Տէր-Գէորգեան, Սրշակ և Սաթենիկ, Անդրէաս և Դարիա Բարխուդարեաններ, Մարիամ Մնացականեան որդկերանցով, Եղիսաբէթ և Տիգրան Խաչանց, Յասիկ և Պետրոս Մեժլումեանց։ Աճիւնը չորեքշաբթի, ապրիլի 9-ին, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի բնակարանում (Сіонская, I Соборн. тупик. № 6)։ Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, ապրիլի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին. թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

(չ. հ.) 2—2

Երկուշաբթի, ապրիլի 14-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԱՆԻ ԱՄԱՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան միջոցները շատացնելու համար

Տեղի կունենայ
ԱՌԱՋԻՆ
Գարնանային մեծ
ՀԲՈՍԱՆՔ

Վիճակախաղ-ալեգրիով
Վենետիկի Ջրանցք նաւակներով (գօնդոլ), Նկարչական էկսօկներ, զատկական ձու, պասկա-հսկայ, այլ և այլն։ Ֆրանսիական կարթեր, պոի-շվո, ծաղիկներ, կօնֆետտի, սերպանտին, բուֆետ, օգապարիկ, Պ Ա Ր Ե Ր։
Այգում կը նուագէն երկու զինուորական նուագախումբ և սաղմնդար։ Այգին գեղեցիկ կերպով զարդարված կը լինի զրօշակներով և կանաչով, իսկ երեկոյեան—հրավառութեան մէջ։
ՍԿԻԶԲՆ Է ՑԵՐԵԿՎԱՑ ԺԱՄԸ 2.Ի8
Մուտքի վճարը մեծերի համար 30 կ., երեխաների համար 20 կ.։ Իւրաքանչիւր երեխաների տոմսակը մուտքի մօտ ստանում է մի բէղնի շար ձ ր ի։
(6, 10, 13) առ. 3—2

Մեծադիր պատկերների
ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ
ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Գանձակայա փողոց № 7)
Ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ լուսանկարած մեծ ու փոքր պատկերներից և մեծացվում են գեղարուեստական ճաշակով մինչեւ ցանկացված չափը։
Գները մինչև առաջիկայ Զատիկը
ՀԷԺԱՆԱՑՎԱԾԵՆ
Յ դրուբլուց սկսած
Արուեստանոցը մինչև Զատիկ բաց կը լինի և կիրակի օրերը մինչև ժամը 4-ը։
(ա. օ.) առ 10—6

Ընթերցասէր մանուկներին և պատանիներին տօնական նուիրաբերութիւնների համար
„ԼՈՒՍԱԲԵՐ“
գրախանութում վաճառվում են հետևեալ պատկերազարդ գրքոյկները
«Պատանեկան գրադարան» (Բագուի հայոց կուլտուր. միութ. հրատ.)
1. Անգլուխ ձիաւոր, հեղ. Մայնրիդի, մասն ա. № 1. 30 կ.
2. » » » № 2. 30 կ.
3. » » մասն բ. № 3. 30 կ.
4. Ցրենի . . . 5 կ.
«Նոուեր մանուկներին»
5. Անձնազոհ մանուկ . . 10 կ.
6. Փոքրիկ Պարսյրի արկածները 15 կ.
7. Ոգնիներ . . . 8 կ.
8. Առակներ . . . 12 կ.
9. Որբ Աննան . . . 12 կ.
10. Նելլօն և Պատրաշը . . 10 կ.
11. Ռուբէնի զբաղմունքը . 25 կ.
12. Արջի պատմութիւնը և գայլը 15 կ.
13. Մաղնիս . . . 12 կ.
14. Փիղ . . . 8 կ.
15. Բու . . . 12 կ.
16. Արցունք . . . 15 կ.
17. Լերան աղջիկը . . 20 կ.
«Մանկական գրադարան» Ա. Պողոսեանի
18. Պատմուածքներ կենդանիների կեանքից . . . 40 կ.
«Մանկական գրադարան» Լ. Մ. Ադամեանի
19. Փոքրիկ Ցուլակն ու Խլուրիկ նապաստակը . . . 55 կ.
20. Նապաստակ Խէչանի վրէժխնդրութիւնը կամ ինքդ քեզ օգնիր 40 կ.
21. Առաջին վաստակ . . 40 կ.
Հ. Առաքելեանի Մեսրոպեան Հաւատամքի գրադարանի հետևեալ գրքերը.
22. Անդէրսօնի հէքիաթները . 50 կ.
23. Դէպի Արարատ . . 40 կ.
Դիմել՝ Тифлисъ, Фото-цинкографія С. А. Согомоняна. Базарная ул. № 20.

Բագուի հայոց եկեղեցուն կից գրավաճառանոցում վաճառվում է
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ 50 կ.
ՎԻՐԱՒՈՐ ԲԼԲՈՒԼ 45 կ.
ԾԱՂԿԷ ՓՈՒՆՋ 40 կ.
ԾԻԾԱՂԱԲԵՐ 20 կ.
ՌԱՄԿԱԿԱՆ ՇՐՄՈՒՆՋՆԵՐ 60 կ.
Ցարմարագոյն նուէրներ Զատիկվայ առիթով։
(չ. հ.) առ. 2—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
Բաղդադի յայտնի ֆիրմայի, ստացված է Թիւրքիայից և ծախվում է գործարանային գներով ԼՈՐԷՆԻ սերմերի դէպօում, Միխայլովսկի պրոսպէկտ, № 23, Զ. ՄԱՆԻԵՎԻ մագազինում՝ Պուշկինսկայա փող., ուղղափառ սեմինարիայի հանդէպ, Ի. Մ. ՄԱՄՈՒԼՕՎԻ դիմեատանը՝ Գօլովինսկի պրոսպեկտ, № 25.
առ. (ա. օ) 10—6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
յայտնելով որ առաջիկայ Զատկական տօների առիթով շնորհակալութեամբ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
աղքատների համար
ՆՈՒԷՐՆԵՐ
դրամով, մթերքներով և շորով, ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը, ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площ. №7), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձնաւորութիւններին օգնութեան հասնել այդ թշուառներին։
Ընդունվում են նուէրներ Զատկական փոխայցելութիւնների տեղ։
(առ.) 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

— Գիրք չը կայ կարդալու համար. ձեռնարկները չը կան այս ու այն արհեստի ուսումնասիրութեան համար. հրահանգներ չը կան գործնական ցուցումների համար կեանքի զանազան ասպարէզներում։

Ահա գանգատներ, որոնք ժամանակ առ ժամանակ երևան են գալիս և այժմ դարձեալ սկսում են լսվել յաճախակի մեր շուրջը։

Այն գրքերը, որոնք գոյութիւն ունեն հրապարակի վրա, այլ ևս լիովին չեն գոհացնում ժողովրդին։ Նրանք բաւարարութիւն են տալիս պահանջների մի մասին միայն։ Անհրաժեշտութիւն է զգացվում նոր գրքերի, որոնք կարող լինէին համապատասխան լինել ժողովրդի մտաւոր և առօրեայ կենսական պահանջներին։

Այն ընթերցանութիւնից, որ ունեցել է մեր ժողովուրդը, առաջ է եկել որոշ հարցասիրութիւն և կեանքի մէջ կուլտուրական գործ կատարելու որոշ ցանկութիւն։

Ընթերցողների թիւը մեծ չէ սեղանում, բայց և այնպէս ընթերցողների մի որոշ քանակ գոյութիւն ունի, որը անմիջապէս թէ անդրադարձաբար ազդեցութիւն է գործում կեանքի ասպարէզում։

Եւ ահա մարդիկ պահանջ են զգում, որ ընթերցանութիւնից ստացած նրանց ոգևորութիւնը և գործելու ցանկութիւնը սկսեն մարմնանալ կեանքի մէջ և արտայայտվել իրական գործերով։ Ընդհանուր հարցասիրութիւնը կարիք է զգում արդիւնաբար և հարուստ պարունակութեան, որպէսզի նա դառնայ կուլտուրական գործօն։

Դժբաղդաբար, մտաւոր ոյժերի ոչ մի համախմբում և ոչ մի յատուկ հիմնարկութիւն մեզանում իրանց համար նպատակ չեն դրել մշտական մտաւոր մնունդ հայթայթելու ժողովրդին և այդպիսով զինելու նրան գիտութեան և արհեստի ուժեղ զէնքերով։

Եթէ մեզ համար թանգ է ժողովրդի մէջ ընթերցանութեան միջոցով գիտութիւն և գիտակցութիւն տարածելը, այն ժամանակ պէտք է այդ ընթերցանութեան համար առատ նիւթ ունենանք մեր տրամադրութեան տակ։

Այդ նիւթը չը կայ բաւարար քանակով։

Ո՞ւմ վրա են ծանրանում նրան պատրաստելու հոգսն ու պարտաւորութիւնը։

Մտածեցէք։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 7 ապրիլի

Պետական Դումային աջակողմեանների ներկայացրած հարցապնդման պատասխանութիւնը հետևեալն է.

«Վերականգնելով Կովկասի փոխարքայութիւնը, նպատակ կար մի ձեռքում կենտրոնացնել երկրի բոլոր իշխանութիւնները, արագօրէն վերջ դնելու նպատակով այն անկարգութիւններին, որոնք յաճախ զինված ապստամբութեան էին փոխվում։ Մինչդեռ, փոխարքայութիւնը վերականգնելուց յետոյ, երեք տարվայ ընթացքում անկարգութիւնները աւելի շատացան և ընդունեցին զուտ յեղափոխական բնաւորութիւն—սիստեմատիկօրէն արտաքսելու Մեղրիովկասի ռուս ազգաբնակութիւնը՝ իրականացնելու համար օտարազգի սեպարատիստական գաղափարը։

«Քաղաքական բանտարկեալների բանտերից ազատ կերպով փախչելու բազմաթիւ փաստերը բաւական առիթ են տալիս կարծելու, որ այն իշխանութիւնները, որոնք պէտք է հսկեն բանտարկեալների վրա, անգործ են կամ իշխանութիւնը ի չարն են գործ դնում։

«Կովկասեան վարչութեան այդօրինակ գործելակերպը, հարցասիրման հեղինակների կարծիքով, իր մէջ պարփակում է իշխանութիւնների յանցաւոր անգործութեան բոլոր նշանները։

«Մի ամբողջ խմբակ է բռնված, որ կեղծ թղթերով ստացել է այն գումարները, որ Ցուսիմի կուռում ընկած նաւաստիները մտցրել էին խնայողական գանձարանները։ Խմբակի գլխաւորը, ինչպէս երևում է, ծովային մինիստրութեան պաշտօնեաներից է։ Գործում մասնակցութիւն են ունեցել նաև կանայք»։(Հс.)

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Ռուսաստանի, Ֆրանսիայի, Աւստրիայի, Իտալիայի և Անգլիայի ներկայացուցիչները Բ. Դրան մի նոտա յանձնեցին, որով խորհուրդ է տրվում շուտափոյթ վերականգնել Մակեդոնիայի ժանդարմական օֆիցէրների հետևյալ պայմանագրերը։ Նոտայում առաջ է բերված նոր պայմանագրի նախագիծը։ («Հ. Գ.»)

Հռոմ, 8 ապրիլի

Այն նաւերը, որոնց մտադրութիւն կար Սուդա ուղարկել, այլ ևս ծով չեն մտնի։

Թիւրքաց զեսպանը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ Տրիպոլիսի և Միսրաթի միջև երթևեկող իտալական նաւի վիճելի հարցը կը լուծվի բարեյաջող մտքով։

«Պօլօլօ Բոմանա» լրագիրը հաղորդում է, որ այսօր իրանց պաշտօնատեղին են մեկնում այն պաշտօնեաները, որոնց յանձնված է իտալական պաստային բաժանմունքներ բանալ Կ. Պոլսում, Սմիրնայում, Սալոնիկում և Երուսաղէմում։ («Հ. Գ.»)

Աթենք, 8 ապրիլի

Վիլհէլմ կայսրը արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցչի ներկայութեամբ ընդունեց սուլթանի արտակարգ զեսպանութիւնը, որի կազմի մէջ մտնում են Թուրխան փաշա և Զեմիլ-բէյ մինիստրները և ուրիշ երեք բարձրաստիճան պաշտօնեաներ։ («Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Ֆրանսիան չէ ընդունում Բ. Դրան առաջարկութիւնը՝ Էրէկլիի ածխահանքերը յանձնելու։ («Հ. Գ.»)

Ուրֆա, 8 ապրիլի

Թէրզեվարում թիւրքաց զօրքերը առաջ են շարժվում։ Երեք գլխաւոր կէտերում նրանք դրել են ուսեկատներ և պահակախմբեր, որոնք արգելք են հանդիսանում Ուրմիայի և վիճելի շրջանների յարաբերութիւններին։

Թիւրքիայի սահմանները ընդարձակվում են։ Կապիգաղան գիւղը արդէն գրաւված է։ Երկու շաբաթվայ ընթացքում քիւրդերը տասնհինգ տեղերում փչացրել են հեռագրաթելերը և տարել են բազմաթիւ սիւներ։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 8 ապրիլի

Գեներալ Լինէվիչը մահամերձ է։(Б.)

Օրէօլ, 8 ապրիլի

Օկա գետի խիստ վարարումից ջրասուզվել են 560 տուն։ Քնակիչները մեկնում են քաղաքից. խեղճերը փրկութիւն են որոնում տանիքներում։ Քաղաքի պատրաստած 40 նաւակները անբաւարար երևացին։ Սպասվում է մթերքների կարիք։ Վնասվածներին կերակուր է ուղարկվում։ («Հ. Գ.»)

Մելբուրն, 8 ապրիլի

Բրէյբրոկի մօտ երկու գնացքներ ընդհարվեցին։ Երեք վագոններ խորտակված են. 42 հոգի սպանված են, 88-ը՝ վիրաւորված։ Ծռված հրդեհի ժամանակ շատերը ծանր խանձուածքներ ստացան։ («Հ. Գ.»)

Գանձակ, 8 ապրիլի

Երէկ, երեկոյեան ժամը մօտ 8-ին, Շիբի-Զուարդար կոչվող թաղում (Գանձակ քաղաքի գետի ձախ ափին թուրքաց մասում) տարաձայնի մի քանի հարուածով սպանեցին Գանձակի գաւառապետ գնդապետ Աւալիանուն։ Կասկածով ձերբակալվածներից մի քանիսին արձակեցին, երկուսը դեռ բռնված են։ Հանգուցեալը իր բնակարանից գալիս է լինում ակումբը։

Սագան

Շուշուց մեզ գրում են.

Երէկ, ապրիլի 6-ին, Թթու Ջրի մօտ գինված յարձակման է ենթարկվում քաղաքից Գօրիս ուղևորված պօստը։ Յարձակվողները զօրեղ կրակ բանալով, սպանում են պօստին ուղեկցող մի պահակի և 5 ձիեր։ Կառապանը և միւս պահակները փախուստի դիմելով, ազատվում են։ Յարձակվողները տարել են մօտ 30,000 բուբլի։ Լուրը քաղաքս հասնելուն պէս գաւառապետը կօզակների ուղեկցութեամբ ուղևորվում է դէպքի վայրը։ Ինչպէս լսվում է, հետքեր են գտել թուրք գիւղում։ Զ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՈՍՏԻԿԱՆԱԳԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջարկում եմ ոստիկանութեան պաշտօնեաներին դիտել բոլոր մթերքները վաճառող խանութները և կրպակները և անմաքրութեան դէպքում իւրաքանչիւրի մասին արձանագրութիւն կազմել։

Գրիստաները պէտք է կարգադրեն, որ բոլոր աֆիշները պոկեն և կիոսկների վրա մաքուր թուղթ կպցնեն։

Այս տօներին ուժեղացնել ոստիկանների թիւը՝ գողութիւնների առաջն առնելու համար։

Որովհետև այլևս զաղտնի կերպով անասուն չեն մորթում, առաջարկում եմ պրիստաներին արգելել անասուններ վաճառելը պանդոկներում և անասուններ վաճառողներին ուղարկել քաղաքային անասնատուն։

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ հայկական «Վատակ» լրագրի խմբագիր-հրատարակիչ Մուշեղ Սարգսեան Խուդաբանցը պարտադիր որոշումների 1-ին կէտը խախտելու համար ենթարկվել է 300 բուբլի տուգանքի։ 9-րդ ոստիկանական պրիստաւին առաջարկում եմ երեք օրվայ ընթացքում ի կատար ածել այդ կարգադրութիւնը և ապա զեկուցանել ինձ։

Թիֆլիսի գեն.-նահ. կարգադրութեամբ Բօրչ. գ. Դարգաւ գիւղացի Միքայէլ Սարգսեան, ուղունլարցի Տիգրան Պետրոսեան, Արտաշէս Սարգսեան, Ղազախի գ. կողբեցի Գեղամ Աբրվեան, Ալէքս. գ. Ղշլախ գիւղացի Սարգիս Աւետիսեան, Ս. Սարգսեան, Վարդաբլուր գիւղացի Մ. Աստաուրեան, Գրիգոր Խաչատուրեան և Թիֆլիսեցի Գարապետ Կարապետեան, իբրև հասարակական հանգստութեան համար վերին աստիճանի վնասակար անձեր, աքսորվում են Թիֆլիսի գեն.-նահանգապետութեան սահմաններից զինուորական գրութեան ամբողջ ժամանակամիջոցում։ Այդ մասին յայտնում եմ ի գիտութիւն ոստիկանութեան և 9-րդ ոստիկանական պրիստաւին՝ ի գործադրութիւն։

Փողոցներում կրկին երևացել են հաշմանդամներ և մուրացկաններ։ Առաջարկում եմ ոստին. պաշտօնեաներին արգելել փողոցներում շրջել և թոյլատրել միայն եկեղեցիների և վանքերի բակերում։

Գոյութիւն ունեցող կանոնների համաձայն ոստ. պէտք է հսկեն, որ 1) ապր.

11-ին Թիֆլիսի բոլոր խմիչքավաճառանոցները փակ լինեն ամբողջ օրով. 2) շաբաթ, ապր. 12 ին, բոլոր խմիչքավաճառանոցները փակ լինեն մինչև երեկ. ժամը 6-ը. 3) Զատկի օրը, ապ. 13 ին, բոլորը փակ լինեն ամբողջ օրով. 4) Զատկի 2-րդ և 3-րդ օրերը խմիչքեղէնների խանութները բացվին պատարագից յետոյ և բաց լինեն մինչև երեկոյեան ժամը վեցը։

Ժամանակի այս սահմանափակումը չէ տարածվում միայն հիւրանոցների, երկ. բուֆետների և պանդոկների վրա։ Բոլոր առևտրական, արդիւնաբերական և արհեստ. հաստատութիւնները կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի օրերը պէտք է փակ լինեն։

Արգելել խիստ կերպով, որ պանդոկներում և գինետներում մոլի խաղեր չը խաղացվեն։

Հաճախն քաղաքային վարչութեան որոշման, ժիներների գները էժանացնելու նպատակով, առաջարկում եմ պրիստաւներին կարգադրութիւն անել արգելելու գիւղերից եկող շինականներին մթերքներ վաճառել փողոցներում և իջևանատներում։

Առաջարկում եմ պրիստաւներին օգնել առևտ.-տնտեսական ոստիկ. գործակալներին կարգաւորել ձուի և այլ մթերքների գները և չարչիներին հեռացնել շուկաներից։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ռուս ժողովրդի միութիւնը որոշել է դիմել Պետական Դումայի նախագահ Խոմեակովին և մատնացոյց անել, որ անհրաժեշտ է փոխել Դումայի ընդունած օրէնքը դատապարտվածներին ժամանակից վաղ ազատելու մասին։ («П. К.»)

✦ Ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհուրդը մի տարօրինակ շրջաբերական է ուղարկել իր գաւառական բաժանմունքներին և միութեան մի քանի յայտնի գործիչներին։

«Վերջին ժամանակներս նկատված է,— ասված է շրջաբերականում,— որ ռուս ժողովրդի միութեան թէյատների ու կլուբների մեծ մասը առանում է և տարածում իր անդամների ու այցելուների մէջ այնպիսի հրատարակութիւններ, որոնք հայրենասիրական հայացքներ ամենևին չեն արտայայտում, և ոչ միայն այդ, այլ և անբարոյականացնում են ազգաբնակութիւնը կրամսլային ուղղութեամբ, ինչպես օրինակ, «Новое Время», «Свѣтъ», «Голосъ Правды», «Колоколъ» և այլն։ Բացի դրանից, այդ հրատարակութիւնների մէջ մասնակցում են միութեան գործիչներից մի քանիսը, տպագրութեան տալով նրանց մէջ իրանց յօդուածները, որ բոլորովին անթոյլատրելի է։ Այդ պատճառով, արտակարգ ժողովի մարտի 24-ին կայացրած որոշման համաձայն, գլխաւոր խորհուրդը հրամայում է այլևս չը ստանալ ընթերցարաններում, թէյատներում և կլուբներում վերոյիշեալ հրատարակութիւնները և բաւականանալ միայն «Рус. Знамя», «Вѣча», «Другъ» և գաւառական բաժանմունքների օրգանների ընթերցանութեամբ։ Ինչ վերաբերում է ռուս ժողովրդի միութեան անդամներին, պարտաւորութիւն է դրվում նրանց վրա չաղխատակցել այն հրատարակութիւններին, որոնք ոչ մի առնչութիւն չունեն ռուս ժողովրդի միութեան հետ»։ («Рѣчь»)

ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ

—

Շուշի, ապրիլի 7-ին

Մենք՝ մամուլի գաւառական աշխատակիցներս մի կորուստ ունեցանք։ Այսօր, ամսոյս 7-ին, գերեզման իջեցրինք Գրիգոր Տէր-Միքէլեանին, որը յայտնի էր հայ պարբերական մամուլի մէջ «Սերմնացան» կեղծ անունով։ Վերջին անգամ ես նրան տեսայ ընկճված, յուսահատ դրութեան մէջ քաղաքային գրադարան - ընթերցարանում, բարեգործական ընկերութեան ժողովի ժամանակ. կարծէք եկել էր ոչ թէ նրա համար, որ իր ներկայութիւնը անհրաժեշտ էր որպէս ինտելիգենտ մարդու, որպէս մամուլի գաւառական աշխատակցի և այլն, այլ ակամայից, ի միջի այլոց...

Ցիշենք նրա անցեալը։

Գր. Տէր-Միքէլեան ծնվել է Շուշի քաղաքում, որքան գիտեմ՝ 1850 թուին։ Նա մեռաւ ուրեմն 58 տարիկան հասակում, մի հասակ, երբ քչերն են մտածում մեռնելու մասին...

Սկսած 1875 թուականից մինչև 80-ական թուականների սկիզբները հանդուցեալը տեղիս քաղաքային ուսումնարանում վարում էր ուսուցչական պաշտօն, ուսանելով ռուսական և ֆրանսիական լեզուներ։ Բաղմաթիւ շուշեցիներ, որոնք այս բոլոր դեր են խաղում մամուլի ասպարէզում, իրանց տարրական ուսումը ստացել են, հանդուցեալից։ Թողնելով ուսուցչութեան պաշտօնը և ապրելով իր հայրենի քաղաքում հանգուցեալը երկար տարիների ընթացքում մասնակցութիւն է ունեցել այսպէս ասած ազգային հասարակական գործերում։ Հանգուցեալը երկար տարիներից ի վեր աշխատակցել է «Արձագանքին», «Մշակին», «Աղբիւր Տարազին» և այլն։

Այսուհետև հանգիստ նրա ոսկորներին...

Գօղ. Զաքարեան

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

XI

Դեռ ես նստած եմ Մերվում։

Սակայն այստեղ, վերածնվող բնութեան ծոցում, գարնան ջերմ շողերի ախորժ գուրգուրանքների տակ, ես կուզենայի, քաղաքային ժխորի մէջ դալկացած, մանկութեան անհոգ օրերի յուշերը վերստին տպաւորել առօրեայ հոգսերից կազդուրված մտքիս ու սրտիս մէջ։

Գարուն է, ջինջ ու ախորժ գարուն։ Սառ շղարշի տակից թափանցող ճաճանչները չարաճճիօրէն խայթում-խտուտ են տալիս. վերարկուով շրջելը անտանելի է դառնում. իսկ դաշտերի վրա գորգերի նման ափված մարմանդ կանաչները, նորափթիթ ծաղիկներով գոյնզգոյն պճնված ծառերը սիրագեղ ժպիտով հրապուրում, քաշում են դէպի իրանց, իրանց արբեցուցիչ բոյրով ու տեսքով շոյում, բորբոքում։

Եւ այդ ժամին միայն մարդն է, որ, անզգայ դէպի բնութեան այդ գեղեցիկ վերածնութիւնը, ստուերարկում է նրան և շարունակում քայլել նրանից հեռու, անյագ կերպով սակարկել իրար հետ և ամեն ինչ ստորագրել շուկայի երկաթի օրէնքներին։

Ընչաքաղութեան այդ ընդհանուր տապի մէջ, գարնան շողերից ուշաբերված, զողզողուն տեսքով բարախում է այստեղ անհոգ թիթեռնիկների նման բաց օդում թռվռացող մանուկների և մէկ էլ գիտակցութեան ուղին բռնած հայ կնոջ կեանքի զարկերակը։ Կնոջ զգայուն սիրտը ճգնում է դուրս թռչել ընտանեկան առանձնարանի վանդակապատից, ապրել հասարակական կեանքով, տանջվել ընդհանուր ցաւերով և իր կարեկցութեամբ մեղմել չարիքի ճանկերի մէջ հիւծվող թշուառներին։

Եւ առաջին դժուար, բայց հաստակրելի քայլը արդէն կատարված է։ Մերվի հայ կանայք հիմնել են կանանց բարեգործական ընկերութիւն։

Սակայն այդչափը միայն։

Առաջին քայլից յետոյ, երկրորդը, աւելի դրական ու բեղմնաւոր քայլը, դեռ ես չենք տեսնում հրապարակի վրա, բայց պէտք է ապասել, որ ժամիկ ապագայում անպատճառ կը լինի, եթէ միայն գարնան վերածնող շողերը կարողանան թափանցել դեկավարների սրտերը, եռանդ ներշնչել նրանց, շարժել նրանց նուրբ լարերը, և մէկ էլ, եթէ մինչև այդ մեր ազգային մեծապատիւ դրամաշորթները յեղափոխական գրոհով չը խլեն նրանց գրամագլուխը ես այնպէս, ինչպէս որ վարվել են մի տարի առաջ ոչ «կարմիր» կանանց «կարմիր խաչի» ընկերութեան հետ՝ էկսպրոպրիացիայի ենթարկելով վերջինիս 266 ռուբլի դրամագլուխը, հակառակ նրա կամքի, և կազմալուծելով նրան։

Կանանց բարեգործական ընկերութիւնը, առանց վարանելու՝ կարող էր հէնց այժմից գործնական քայլեր անել. բանալ որբանոց, մանկական պարտէզ, կար ու ձևի արհեստանոց կամ ջուլհականոց, մի խօսքով դրանցից մէկին ու մէկը։ Վերջինս ամենաւելի նպատակայարմար կը լինէր այն տեսակէտից, որ գործադրութիւնը Մերվում աւելի լաւ կարելի է կատարելագործել, քան մի ուրիշ տեղ։

Իսկ այդպիսի գործի ձեռնամուխ լինելու համար, որքան կարողացայ իմանալ, հարկաւոր գումարը կայ, և եթէ չը լինի էլ, կարելի է հեշտութեամբ լրացնել։ Ուրեմն մնում է, որ տեղական հայ կանայք միահամուռ այժերով առաջ մղեն իրանց սկսած համակրելի գործը և կենդանութիւն տան Մերվի անգոյն ու նեխված, լճացած մթնոլորտին։

Դա կը լինի գովելի մի գործ և նախանձելի օրինակ։

XII

Այստեղ ես լսել էի, որ տեղացի հայերից մէկի տանը հնութիւնների բաւական հարուստ ժողովածու կայ։ Շատ էի ցանկանում գնալ տեսնել, բայց, անծանօթ լինելով, մի առժամանակ յետաձգեցի դիտաւորութիւնս։

Առիթը վերջապէս ներկայացաւ. պարոնը ինքը եկաւ ծանօթանալու, և ես շտապեցի յայտնել իմ ցանկութիւնը, որ նրա կողմից ընդունվեց մեծ ուրախութեամբ։

Բաժանվելիս՝ Միքայել Արտեմիչ Աստուածատրեանը—այդպէս էր կոչվում նոր ծանօթս—խնդրեց երկրորդ օրը սուրճին իր տանը լինել։

Միւս օրը ժամը 12-ին նա ինքը մտաւ ինձ մօտ և մենք միասին գնացինք իր տունը, որ գտնվում էր քաղաքի ծայրին, մի ընդարձակ պարտէզի մէջ։

Ներս հրաւիրեց. փոքր ու լուսաւոր, պատերը գորգերով զարդարված դահլիճը կարծես հնութիւնների մի հաւաքատեղի լինէր, ուր ցուցադրված էին պատմական զգեստներ, զէնքեր, նետեր, աղեղներ, պարագաներ, բազմաթիւ դրամներ, գորգերի կտորներ և այլն, իսկ առաստաղից կախված էր թելի վրա երաժշտական մի գործիք։ Մի խօսքով բազմաթիւ հնութիւններ, որոնք անպայման կարող են ճոխացնել իւրաքանչիւր մի թանգարան։

Ցաւում եմ, որ այդ հնութիւնների ցուցակը անկարող եղայ կազմել, որով թերևս կարող լինէի հնագէտների ուշադրութիւնը հրաւիրել այդ ժողովածուի վրա։

Մ. Ա., ինչպէս նկատեցի, բաւականին սէր ունի այդ ճիւղի մէջ։ Նա, ի միջի այլոց, ունի ճարտարապետական մի ուսումնասիրութիւն, ուուցց առնտրի զարգացման համար, եթէ չեմ սխալվում, դէպի Մէխստան, որը արդէն տպագրված է զինուորական շտաբի մի ինչ-որ հրատարակութեան մէջ։

Կարծում ենք ժամանորապէս նա կարող էր նաև օգտակար լինել մեր նորակազմ ազգագրական ընկերութեան համար։

Շնորհակալութիւն յայտնելով պարոնին ստացածս բաւականութեան համար, ես հրաժեշտ տուի։

Որքան տեղեկացայ՝ նոյնանման, թէև աւելի փոքր քանակութեամբ ժողովածուներ կան նաև Մերվում և Ասխարադում, որի վրա հրաւիրում ենք ազգագրական ընկերութեան ուշադրութիւնը։

Աշխատակից

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Ապրիլի 8-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվեց 1906 թ. մայիսին իշխ. Ամիլախվարու, Մաչաբելու, Կվալիէվի և այլոց վրա ռումբ նետելու գործը, որ հինգերորդ անգամ յետաձգված էր։ Նախագահում էր Երմօլաէվ, անդամներն էին Լանկո և պատուաւոր հաշտարար Կիկօձէ։ Մեղադրում էր զինուորական դատախազի օգնական Մելիքով։

Մեկադրեալներին պաշտպանում էին երդ.-հաւ. Բախուտով, Զափարիձէ և Մաչավարիանի։

Դատավճիռը կարդացվեց հետևեալ օրը. բոլոր մեղադրեալները արդարացան։

Դատախազը բողոքեց։

ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Նահանգական մատակարարական յանձնաժողովի վերջին նիստում որոշվեց այն հացի քանակը, որ հարկաւոր է ինչպէս ուտելիքի, այնպէս և սերմացուի համար ամբողջ Թիֆլիսի նահանգի սահմաններում։ Յանձնաժողովը իր յիշեալ որոշումը կայացրեց գաւառական մասնաժողովների ներկայացրած տեղեկութիւնների հիման վրա։

Այդ քանակութիւնը արտայայտվում է հետևեալ թիւերով. ա) ժատակարարութեան համար 1) Թիֆլիսի գաւառին՝ 48,375 պուդ, 2) Բօրչալուի գաւ. 41,107 պուդ, 3) Ախալքալաքի գաւ. 39,000 պուդ, 4) Դուշէթի գաւ. 18,600 պուդ, 5) Գօրու գաւ. 9150 պուդ, 6) Սղնախի գաւ. 3750 պուդ. սերմացուի համար 1) Բօրչալուի գաւ. 30,464 պուդ և 2) Դուշէթի գաւ. 3500 պուդ. ընդամենը մատակարարութեան համար 159,982 պուդ և սերմացուի համար՝ 33914 պուդ, իսկ ընդամենը 193,946 պուդ ցորեն։

Այս միևնոյն նիստում յանձնաժողովը վերստին որոշեց 1) բաց թողնել մատակարարութեան համար Դուշէթի գաւառական մասնաժողովին առայժմ 10 վագոն ալիւր (7500 պուդ), իսկ Սղնախի—5 վագոն (3750 պ.), և 2) յանձնարարել գործադիր մասնաժողովին, որ գործում է Հշխ. Գ. Թումանովի նախագահութեամբ, Ռուսաստանի ներքին նահանգներում և Հիւսիսային Կովկասում գնած 50000 պուդ ալիւրից և 15000 պուդ ցորենից բացի այժմ դուրս գրել կրկին 25000 պուդ ցորեն՝ պուդը 1 ռ. 53 կոպէկից ոչ թանգ, և 30000 պուդ գարի՝ պուդը 1 ռ. 12 կոպէկից ոչ թանգ։

(«Ռ.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 6 ապրիլի

Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, կրուժոկի դաշտիճում կայացաւ Կովկասի հայոց բար. ընկ. ճիւղի բացումը և ընդհանուր ժողովը։

Ինչպէս իր ժամանակին գրել էի Գանձակից, երկու նախաձեռնող խմբակ, մէկը մեսից անտեղեակ, դիմել էին կենտր. Խորհրդին՝ Գանձակում բար. ընկ. ճիւղ բանալու իրաւունք ձեռք բերելու համար։

Անցեալ կիրակի օրվայ նախապատրաստական ժողովին, թիւրիմացութեան շնորհիւ, բացակայում էին մի խմբակի պատկանող նախաձեռնող անդամները—և այդ պատճառով նրանք փոքր ինչ վիրաւորվել էին։

Այսօրվայ ժողովում, այդ ոչ ցանկալի թիւրիմացութիւնը պարզելուց յետոյ, ներկայ եղող միւս խմբին պատկանող տիկ. Աննա Մելիք-Բէգլարեան յայտնեց, որ իրանք բոլորովին միանում են այսօրվայ ընդհանուր ժողովին։

Ընկերութեան 59 անդամներից ինքնաբերաբար ներկայ էին ժողովին 40 անդամներ, որոնց թւում 5 անդամուհիք։ Ընդհանուր ժողովի համար ընտրված նախագահ բժշկապետ Գերասիմ Մելիք-Բէգլարեանը ժողովականներին ծանօթացրեց ընկերութեան կանոնադրութեան գլխաւոր յօդուածների հետ, որից յետոյ ժողովը որոշում է գաղտնի քուէարկութեամբ ընտրել վարչութեան անդամներ և վերստուգիչ յանձնաժողովի անդամներ։ Վարչութեան անդամներ և փոխանդամներ ընտրվում են հետևեալ անձինք. բժշկ. Գերասիմ Մելիք-Բէգլարեան, իրաւաբան Իսահակ Խօջաեան, Աննա Մելիք-Բէգլարեան, Լևոն-բեգ Մելիք-Մնացականեան, իրաւաբան Յովսէփ Մելիք-Բէգլարեան, ա. Եղիսաբէթ Նաբաթեան և իրաւաբան Նիկոլայ Բաբաջանեան։

Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Յարութիւն Մալիեան, Յովսէփ Խօջայեան և Աւետիք Սահակեան։

Ժողովի վերջում նախագահը առաջարկեց ժողովին շնորհակալութիւն յայտնել ազիկն Եղիսաբէթ Մալխասեանին, որը գրվել է ընկերութեան մշտական անդամուհի, նուիրելով 100 ռուբլի։

Ժողովականները իրանց շնորհակալութիւնը յայտնելով յարգելի տիկնոջը՝ դանլիճը թնդացրին ծափահարութիւններով։

Սագան

—

Մերվ, 20 մարտի

Մարտի 10-ին, երեկոյեան, դէպի Սամարղանդ ճանապարհվեցին մեր յարգելի հիւրերը՝ Մատթէոս վարդապետ և կ. Խատիսեանը։ Նուէրների ստորագրութիւնը շուտ չը վերջացաւ, այդ պատճառով ընտրվեցին 4 անձնաւորութիւն, որոնց և յանձնարարվից հոգալ այդ մասին և ժողովել ստորագրված նուէրները։

Մերվի հայ գաղութը, հակառակ սպասածից, քիչ նուիրատուութիւն արաւ, և դա իր որոշ պատճառն ունի։ Հայր սուրբը և պ. կ. Խատիսեանը նախ քան ժողով գումարելը իրանց մօտ էին հրաւիրել մի քանի պատուաւոր մարդկանց և անուանացուցակ կազմել դասակարգով, ի հարկէ, աւելի ունևորներից սկսած, ատիճանաբար։ Առաջին տեղը բռնում էր Յ. Աւետիսեանը, որ նուիրեց 500 ռ., երկրորդ տեղը Դ. Մելիք-Մկրտչեանը, որ կարողութեամբ պակաս չէ պ. Աւետիսեանից, բայց նուիրեց 50 ռ., իսկ հետևել ստորագրողները հետևելով Դ. Մելիք-Մկրտչեանի նուիրած գումարին՝ ստորագրեցին 100-ական ռուբլիներ, թէև կարող էին և աւել ստորագրել։ Ահա այստեղ պ. Մկրտչեանի 50 ռ. խանգարեց առատ նուէրներ հաւաքելու, որովհետև Մերվի ունևոր հայ հասարակութիւնը մի տեսակ սովորութիւն ունի, միշտ կամայ թէ ակամայ իրար են հետևում։

Մանասէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի կիրակի, ապրիլի 13-ին։

✦ Մեզ հաղորդում են, որ Գայիանեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը որոշել է կազմակերպել մի մեծ ժողովրդական գրօսանք յօգուտ դպրոցի, ի նպատի ունենալով որ դպրոցը ստիպված է արձակել մօտ 60 աշակերտուհիներ, ուսման վճարը չը տալու պատճառով։ Գայիանեան դպրոցը, որ Թիֆլիսի ամենահին իգական դպրոցն է և պատկանում է մի եկեղեցու (Մղնի), որի ծախսանները Սօլօլակի արիստոկրատիայից շատերն են, գտնվում է ամենաանախանձելի ֆինանսական դրութեան մէջ, որովհետև եկամտի ոչ մի ճայուն աղբիւր չունի։ Մի խումբ տիկնայք, օրիորդներ և պարոններ յանձն են առել հոգաբարձութեան հրաւէրով կազմակերպել այդ գրօսանքը, որ, յոյս ունենք, կարժանանայ հայ հասարակութեան և մանաւանդ Մղոնու ծնողների աջակցութեանը։

✦ Իշխ. Ի. Շավճավաձէի ֆօնդի համար առ 1-ն ապրիլի հանգանակվել է 5913 ռ. 62 կ.։

✦ Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքը ապրիլի 10, 15 և 19-ին բաց կը լինի միայն 2 ժամով, առ. 10—12։

✦ Թիֆլիսի մէշչանների աւագի պաշտօնի թեկնածուներ համարում են նաև Վեոսմխանովին և Կլեմենտիէվին։

✦ Ապրիլի 8 ին գրաւեցին Թիֆլիսի գրավաճառանոցներում գտնված Բ. Իշխանեանի «Ազգային գրագրեսը և դասակարգային շահերը» գիրքը։

✦ «Т. Л.»-ի հաղորդած մանրամասնութիւններից երևում է, որ Գանձակի գաւառապետ Ավալիանուն սպանել են ապրիլի 7-ի երկ. ժամը 8 ին տեղական հասարակական ժողովարանի դռան մօտ։ Ժողովարանը, ինչպէս յայտնի է, գտնվում է քաղաքի մահմեդականների մօտում։ Մարդասպանները ազատ են։

✦ Երէկ, ցերեկվայ ժամը 11½-ին, Մուխրանովի փողոցում, Սօլոլակի բազարի մօտ, լսվեց ատրճանակի մօտ 10 հարուածների կրակոց։ Պարզվեց, որ երկու չարագործներ տեղն ու տեղը սպանեցին Թիֆլիսի վաճառական Վարդապետիկեանին, որին մի ամիս առաջ վիրաւորել էին փող չը տալու համար։ Չարագործները, օգտվելով իրարանցումից, անյայտացան։

✦ Ստացանք Իոսիֆ Իվանովի «Изъ записокъ туристовъ», «Русскій Туристъ» թերթից արտատպված, թիւրքահայ սովեալների օգտին, գինն է 50 կ.։

✦ Թիֆլիսի եղբ. Միրզոյեանների և ընկ. նաւթարդիւնաբերական և առևտրական տունը, փակելով իր 1907 թուի եւմուտքը, անցեալ կիրակի կայացած ընդհանուր ժողովում յայտնեց, որ բաժնետէրերի համար մնում է դիվիդենտ 600,000 ռուբլի։ Ընդհանուր ժողովը որոշեց 10,000 ռուբլի յատկացնել բարեգործական նպատակներին։ Այդ գումարից 1000 ռ. տրվել է հայոց բարեգործական ընկերութեան և 1000 ռ. թիւրքահայ սովեալների ի նպաստ Հանգանակիչ Մասնաժողովին։

✦ Ապրիլի 15-ին Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի սաները իրանց վերատեսուչ Ակուլովի հետ մեկնելու են Աւճալա՝ ջրաժբաքը դիտելու համար։ Գալիք շաբաթ նոյն աշակերտները կը դիտեն Թիֆլիսի գործարանները և ֆաբրիկաները։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Թիֆլիսի բնակչուհի Ա. Պապանաձէին հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ, քաղաքական, տնտեսական, հասարակական և գեղարուեստական շաբաթաթերթ, երգիծաբանական յաւելուածով, վրաց լեզուով, «Մօցանէ» (Աշակերտ) անունով։

✦ Թիֆլիսի քաղաքային հաշուապահական մասից երևում է, որ քաղաքային Ջրանցքը իր գոյութեան 20 տարվայ ընթացքում քաղաքին զուտ արդիւնք է տուել 1,710,480 ռ. 80 կ։

✦ Թիֆլիս են եկել Բագուից նաւթարդիւնաբերողների համագումարի դրացի սաները քաղաքի զանազան հնութիւնները և հաստատութիւնները դիտելու համար։

✦ Կովկասի Փոխարքան թոյլատրել է ազնւական Գվատուային աւտօմոբիլների հաղորդակցութիւն հաստատել Զուգդիդի և Նոր-Սենակի միջև։

✦ Կովկասեան շրջանային զինուորական բժշկական տեսուչ Մալինինի տեղ նշանակվում է Վարշավայի հան. զինուորական բժշկական տեսուչ Վ. Շուխով։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է քաղաքային վարչութեանը՝ ծախսել ապրիլ ամսվայ համար քաղաքի նախահաշուում նշանակված գումարը, որ անում է 169,837 ռ. 81 կ., այն պայմանով, որ վարչութիւնը նախօրօք ներկայացնէ այն անձանց ցուցակը, որոնց նպաստ և պարգև է տրվելու։

✦ Թիֆլիսի նահանգապետը ապրիլի 8-ին առաջարկել է քաղաքագլխին՝ անմիջապէս յայտնել իրան այն գումարների ընդհանուր թիւը, որ ստացվել է քաղաքային գանձարկղում յունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը, և այդ ժամանակամիջոցում որքանն գումար է տրված զինուորականների բնակարանների համար։

✦ Զինուորական վարչութիւնը անհրաժեշտ է գտել վճարել քաղաքին գործածած ջրի փողը։ Առայժմ վարչութիւնը քաղաքային գանձարկղին վճարել է 1000 ռուբլի։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է տեղացի Մ. Կալաշնիկին հրատարակել Թիֆլիսում իր խմբագրութեամբ հասարակական, քաղաքական և գրական շաբաթաթերթ ռուսերէն լեզուով, «Зарница» անունով։

✦ Սուխումում զինուորական-նահանգական դատարանը քննելով Մուշկարիի գործը, որ մեղադրվում է բազմաթիւ ասպատութիւնների, կողոպտութիւնների և սպանութիւնների մէջ, դատապարտել է նրան մահվան պատժի կախաղանի միջոցով։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

✦ Բաղաքի աղգաբնակութեան առողջութիւնն ու շահերը պաշտպանելու նպատակով, Բագուի քաղաքապետը առաջարկել է տեղական ոստիկանապետին անմիջապէս կարգադրել՝ սանիտարական բժիշկ Տէր-Օհանեանցի ներկայութեամբ կնքելու եղբ. Սկօրելենների, Գլազ և Կրեսինգեն ֆիրմաների պատրաստած № 8 տեսակի ալիւրները, իբրև մարդկանց գործածութեան համար բոլորովին անպէտք և արգելել նրա վաճառումը, մինչև որ այդ տեսակի ալիւրներից պատրաստվին «անասուններին կերակրելու» մակագրութեամբ տոպրակներ։ Այդ մասին քաղաքապետութեան բժիշկ Ժդանովը տեղեկացրել է քաղաքային բուժշկական-սանիտարական բիւրոյին ի գիտութիւն։ («Кас.»)

✦ Ապրիլի 4-ին Բիբի-Էյբաթում, մօտաւորապէս երեկոյեան ժամը 10-ին, ռումբի պայթիւն է տեղի ունեցել Նաֆթալանեան ընկերութեան նաւթահանքում։ Ինչպէս երևում է, ռումբ նետողների նպատակն է եղել սպանել բուրաւոյ վարպետ Զաֆար Գուրբանովին, որին պայթիւնից առաջ, ըստ երևոյթին, դիտաւորեալ կերպով, քաղաքից կանչում են հեռախօսի մօտ։ Երբ վերջինս մտնում է գրասենեակը և մօտենում հեռախօսին, մի անյայտ անձնաւորութիւն դռնից ներս է նետում ռումբը, որ պայթում է մեծ ոյժով։ Գուրբանովը վիրաւորվելով ոտքից՝ հանում է ատրճանակը և երեք անգամ կրակում է փախչողի ետևից, բայց ապարդիւն։ Պայթիւնի միջոցին այդ անենակումն են լինում հեռախօսի մօտ կանգնող ծառան և միքենայապետի օգնականը, որոնք նոյնպէս վիրաւորված են։ Վէրքերը թեթև են։ Դէպքի տեղն է եկել բժիշկը և պրիստաւը, իսկ յաջորդ օրը դատախազի օգնականը, քննիչը և ոստիկանապետի օգնականը։ Քննութիւն է սկսված, բայց առայժմ ոչ ոք կալանաւորված չէ։ Թէև ռումբ նետողը եղել է մի հոգի, սակայն թուում է որ այդ մահափորձը կազմակերպված է եղել մի խումբ մարդկանց կողմից։ Գուրբանովը քանիցս անգամ սպառնական նամակներ է եղել ստացած, որոնցով պահանջում են եղել նրանից հեռանալ պաշտօնից։ («Кас.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Լրագիրներում լոյս տեսած այն լուրերը, թէ մօտ օրերս զինուորական մինիստրը, ա. Եղիսաբէթ Նաբաթեան և իրաւաբան Նիկոլայ Բաբաջանեան։

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Յարութիւն Մալիեան, Յովսէփ Խօջայեան և Աւետիք Սահակեան։

Ժողովի վերջում նախագահը առաջարկեց ժողովին շնորհակալութիւն յայտնել ազիկն Եղիսաբէթ Մալխասեանին, որը գրվել է ընկերութեան մշտական անդամուհի, նուիրելով 100 ռուբլի։

Ժողովականները իրանց շնորհակալութիւնը յայտնելով յարգելի տիկնոջը՝ դանլիճը թնդացրին ծափահարութիւններով։

Սագան

—

Մերվ, 20 մարտի

Մարտի 10-ին, երեկոյեան, դէպի Սամարղանդ ճանապարհվեցին մեր յարգելի հիւրերը՝ Մատթէոս վարդապետ և կ. Խատիսեանը։ Նուէրների ստորագրութիւնը շուտ չը վերջացաւ, այդ պատճառով ընտրվեցին 4 անձնաւորութիւն, որոնց և յանձնարարվից հոգալ այդ մասին և ժողովել ստորագրված նուէրները։

Մերվի հայ գաղութը, հակառակ սպասածից, քիչ նուիրատուութիւն արաւ, և դա իր որոշ պատճառն ունի։ Հայր սուրբը և պ. կ. Խատիսեանը նախ քան ժողով գումարելը իրանց մօտ էին հրաւիրել մի քանի պատուաւոր մարդկանց և անուանացուցակ կազմել դասակարգով, ի հարկէ, աւելի ունևորներից սկսած, ատիճանաբար։ Առաջին տեղը բռնում էր Յ. Աւետիսեանը, որ նուիրեց 500 ռ., երկրորդ տեղը Դ. Մելիք-Մկրտչեանը, որ կարողութեամբ պակաս չէ պ. Աւետիսեանից, բայց նուիրեց 50 ռ., իսկ հետևել ստորագրողները հետևելով Դ. Մելիք-Մկրտչեանի նուիրած գումարին՝ ստորագրեցին 100-ական ռուբլիներ, թէև կարող էին և աւել ստորագրել։ Ահա այստեղ պ. Մկրտչեանի 50 ռ. խանգարեց առատ նուէրներ հաւաքելու, որովհետև Մերվի ունևոր հայ հասարակութիւնը մի տեսակ սովորութիւն ունի, միշտ կամայ թէ ակամայ իրար են հետևում։

Մանասէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի կիրակի, ապրիլի 13-ին։

✦ Մեզ հաղորդում են, որ Գայիանեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը որոշել է կազմակերպել մի մեծ ժողովրդական գրօսանք յօգուտ դպրոցի, ի նպատի ունենալով որ դպրոցը ստիպված է արձակել մօտ 60 աշակերտուհիներ, ուսման վճարը չը տալու պատճառով։ Գայիանեան դպրոցը, որ Թիֆլիսի ամենահին իգական դպրոցն է և պատկանում է մի եկեղեցու (Մղնի), որի ծախսանները Սօլոլակի արիստոկրատիայից շատերն են, գտնվում է ամենաանախանձելի ֆինանսական դրութեան մէջ, որովհետև եկամտի ոչ մի ճայուն աղբիւր չունի։ Մի խումբ տիկնայք, օրիորդներ և պարոններ յանձն են առել հոգաբարձութեան հրաւէրով կազմակերպել այդ գրօսանքը, որ, յոյս ունենք, կարժանանայ հայ հասարակութեան և մանաւանդ Մղոնու ծնողների աջակցութեանը։

✦ Իշխ. Ի. Շավճավաձէի ֆօնդի համար առ 1-ն ապրիլի հանգանակվել է 5913 ռ. 62 կ.։

✦ Պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքը ապրիլի 10, 15 և 19-ին բաց կը լինի միայն 2 ժամով, առ. 10—12։

✦ Թիֆլիսի մէշչանների աւագի պաշտօնի թեկնածուներ համարում են նաև Վեոսմխանովին և Կլեմենտիէվին։

✦ Ապրիլի 8 ին գրաւեցին Թիֆլիսի գրավաճառանոցներում գտնված Բ. Իշխանեանի «Ազգային գրագրեսը և դասակարգային շահերը» գիրքը։

✦ «Т. Л.»-ի հաղորդած մանրամասնութիւններից երևում է, որ Գանձակի գաւառապետ Ավալիանուն սպանել են ապրիլի 7-ի երկ. ժամը 8 ին տեղական հասարակական ժողովարանի դռան մօտ։ Ժողովարանը, ինչպէս յայտնի է, գտնվում է քաղաքի մահմեդականների մօտում։ Մարդասպանները ազատ են։

✦ Երէկ, ցերեկվայ ժամը 11½-ին, Մուխրանովի փողոցում, Սօլոլակի բազարի մօտ, լսվեց ատրճանակի մօտ 10 հարուածների կրակոց։ Պարզվեց, որ երկու չարագործներ տեղն ու տեղը սպանեցին Թիֆլիսի վաճառական Վարդապետիկեանին, որին մի ամիս առաջ վիրաւորել էին փող չը տալու համար։ Չարագործները, օգտվելով իրարանցումից, անյայտացան։

✦ Ստացանք Իոսիֆ Իվանովի «Изъ записокъ туристовъ», «Русскій Туристъ» թերթից արտատպված, թիւրքահայ սովեալների օգտին, գինն է 50 կ.։

✦ Թիֆլիսի եղբ. Միրզոյեանների և ընկ. նաւթարդիւնաբերական և առևտրական տունը, փակելով իր 1907 թուի եւմուտքը, անցեալ կիրակի կայացած ընդհանուր ժողովում յայտնեց, որ բաժնետէրերի համար մնում է դիվիդենտ 600,000 ռուբլի։ Ընդհանուր ժողովը որոշեց 10,000 ռուբլի յատկացնել բարեգործական նպատակներին։ Այդ գումարից 1000 ռ. տրվել է հայոց բարեգործական ընկերութեան և 1000 ռ. թիւրքահայ սովեալների ի նպաստ Հանգանակիչ Մասնաժողովին։

✦ Ապրիլի 15-ին Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի սաները իրանց վերատեսուչ Ակուլովի հետ մեկնելու են Աւճալա՝ ջրաժբաքը դիտելու համար։ Գալիք շաբաթ նոյն աշակերտները կը դիտեն Թիֆլիսի գործարանները և ֆաբրիկաները։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Թիֆլիսի բնակչուհի Ա. Պապանաձէին հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ, քաղաքական, տնտեսական, հասարակական և գեղարուեստական շաբաթաթերթ, երգիծաբանական յաւելուածով, վրաց լեզուով, «Մօցանէ» (Աշակերտ) անունով։

✦ Թիֆլիսի քաղաքային հաշուապահական մասից երևում է

թեան մէջ փոփոխութիւններ են տեղի ունենալու, անհրա՞ժ են։ Վճռականապէս հերքում են և այն լուրը, թէ գեներալ Մեյլեր-Զակոմելսկին կիևի գեներալ-նահանգապետ է նշանակվում գեն. Սուխոմլինովի փոխարէն։ Վերջինս 2 ամսվայ արձակուրդ է ստանում կարելոյն գնալու և ձակուրդ է ստանում յետոյ պիտի ստանձնի վերադառնալուց յետոյ պիտի ստանձնի դարձեալ իր պաշտօնը։

◆ Երկրագործութեան մինիստրը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այս տարի խօլերան կարող է երևալ նորից, շրջաբերականով առաջարկել է միջնակարգ գիւղատնտեսական դպրոցներին և ստորին գիւղատնտեսական դպրոցների կառավարիչներին մի շարք միջոցներ ձեռք առնել էպիդեմիայի ժուռքը դպրոցներում թոյլ չտալու համար։ («Сов. Сл.»)

◆ Վիլնայից հաղորդում են, որ Վիլնի թեմի կաթոլիկ կոնսիստորիայի 9 կանոնները հեռացված են կոնսիստորիայի անդամութիւնից։ Շարժառիթը համարվում է Թեմի եպիսկոպոս բարոն Ռոսպի գրնոյն թեմի եպիսկոպոս բարոն Ռոսպի գրածը։ Վերջինս, ինչպէս յայտնի է, կառավարութիւնը առաջարկել էր կամ հրաժարական տալ պաշտօնից և կամ հաձանչել փոխադրվելու մի ուրիշ տեղ։ Բայց եպիսկոպոսը մերժել էր։ Դրա հետ միաժամանակ առաջարկված էր նաև Վիլնի կոնսիստորիային մի ուրիշ թեմական առաջնորդ ընտրել։ Կոնսիստորիան, քննելով այդ առաջարկը, հրաժարվեց կատարել և պաշտօնական արձանագրութեամբ յայտնեց, որ եպիսկոպոսին հեռացնել կարող է միայն հոգևոր դատարանը։ Զը նայելով տեղական իշխանութեան հնազանդութեան, կոնսիստորիայի անդամները իրանց որոշման մէջ մնացին անդրդուելի և այժմ ահա կրում են վերոյիշեալ պատիժը։ («Сов. Сл.»)

◆ Մոսկվայի քաղաքապետը ապրիլի 3-ին ոստիկանութեանը ուղղած իր հրամանի մէջ ոստիկանական պաշտօնեաների ուշադրութիւնն է հրաւիրում այն երևոյթի վրա, որ վերջին ժամանակներս մայրաքաղաքի փողոցներում լայն չափեր է ստացել խուլիգանութիւնը։ Քաղաքապետը առաջարկում է ոստիկանամասերի պրիստաւներին այդ չարիքի դէմ մաքառելու նպատակով շուտ-շուտ շրջագայել փողոցները, մանաւանդ մարդաշատ փողոցները, և անմիջապէս խուզարկու ոստիկանութեանը ներկայացնել կալանաւորվածներին, մատնանշելով թէ ինչ անկարգութիւն է արել, կռուել է, ծեծել է որևէ մէկին, հայհոյել է, սուտենեօրութիւն է արել, փողոցներում կանանց վիրաւորել է կամ հետևել նոյնն։

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկին մարտի 26-ին հատատել է յունիսի 1-ին Պետերբուրգում հրաւիրվելիք կանանց հատուկ հատուկ համագումարի ծրագիրն ու կանոնները։ («Р. В.»)

ՌՈՒՍԱՍ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՃԱՌԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԱՍԻՆ

(Շարունակութիւն *)

Անցնելով Մակեդոնիայում Թիւրքիայի համաձայնութեամբ հաստատված հսկիչ մարմինների գործունէութեան, ես պէտք է համոզվէի, որ այն առաջնակարգ դերը, որ այդ տեսակէտից դրված է Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի քաղաքացիական գործակալների վրա, այլևս համապատասխան չէ այժմեան դրութեան հետ, և բարենորոգումների յետագայ և միանգամայն աջող իրականացում կարելի է ձեռք բերել միայն այն ժամանակ, երբ մնացած պետութիւնները ևս ունենան այդ գործում։ Ինձ թուում էր, որ, հրաժարվելով այն յատուկ իրաւունքներից, որ տրված է մեզ Աւստրո-Ունգարիայի հետ համապատասխան կերպով, և դիմելով քարոզ մեծ պետութիւնների աջակցութեան, մենք հէնց դրանով ամենալաւագոյն կերպով ապացուցած կը լինենք, որ մենք հետամուտ չենք որևէ էգոիստական նպատակի, և լիակատար վստահութիւն կը ներշնչենք դէպի մեր առաջարկութիւնները ինչպէս սուլթանին, այնպէս և Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան ժանդարմերիայի հարցի վրա։ Ես կրկին նայում էի սոսկ գործնական տեսակէտից և Թիւրքաց զօրքերը ժանդարմերիայով հերթական օգիցերների հրամանատարութեամբ փոխարինելու հարցի տեղ, որ հազիւ թէ իրականանայ առանց տիպական մի միջոցներ ձեռք առնելու, ես չանցի դնել գոյութիւն ունեցող տեղական հասատատութեան զարգացման հարցի լուծումը, մանաւանդ որ այդ հաստատութիւնը որոշ չափով բարելաւող հեռանքներ կանքում տուել է արդէն։

Այդ բոլոր ենթադրութիւնների հիման վրա, ես ձևակերպեցի մեր հրատարակած յուշագրերից ձեզ արդէն յայտնի առաջարկութիւնները, որոնց էութիւնը կայանում է հետևեալում. գեներալ-նահանգապետ նշանակելու փոխարէն մնում է մակեդոնական երեք վիլայէթների գեներալ-տեսուչը ամենապակասը այն ժամանակով, որ սահմանված է մաքսային յատուկ տուրքի համար, և այն պայմանով, որ այդ ժամանակին անցնելուց յետոյ նա չէ կարող պաշտօնից արձակվել առանց բոլոր պետութիւնների հաձայնութեան։ Դերժանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի պատուիրակները ներկայացնում էին մնացած պետութիւնների ներկայացուցիչները։ Ինձ թուում էր, որ, հրաժարվելով այն յատուկ իրաւունքներից, մենք ամենաբարեկամական յարաբերութիւնների մեջ ենք դրվում։ Ես արդէն ասացի, որ իմ գլխաւոր նպատակն էր մի այնպիսի նախագիծ կազմել, որպիսին գործնականապէս իրականանար։ Որ իմ ծրագիրը այդ գործնական նշանակութիւնից զուրկ չէ—վկայում են այն հեռագիրները, որ ես ստանում եմ Բոլգարիայի զանազան քաղաքներից, ուր վերջին օրերս տեղի ունեցան միաձայն ժակեդոնական գործերի առիթով, ի միջի այլոց Կիւստենդիլից, որ գտնվում է Մակեդոնիայի հէնց սահմանագլխին։ Այդ հեռագիրներով լիակատար համակրանք է արտայայտվում մեր նախագծին, որի վրա ամենաջերմ յոյսեր են դրվում։ Մակեդոնիայի գիւղացիական ազգաբնակութիւնը, ես այդ բանում համոզված եմ, դերադանց կերպով հաճանում է, որ եթէ մի կողմից մենք պատրաստ ենք ամեն ջանք ու եռանդ գործ դնել՝ նրան ամենամեծ բարոյական օգնութիւն հասցնելու համար, միւս կողմից էլ մենք չը պէտք է և չենք էլ կարող այնպիսի բան ձեռնարկել, որ վերջ ի վերջոյ ստիպէր մեզ զինված ընդհարում ունենալ ում հետ էլ որ լինի, որովհետև Ռուսաստանը ամենից առաջ կարիք է զգում հաշտութեան, կարիք է զգում վերականգնելու իր ոյժերը վերջին տարիների ներքին և արտաքին ցնցումներից յետոյ։

Մի քանի շաբաթ առաջ ես այս ամբիոնից խօսեցի Հեռաւոր Արևելքի գործերի առիթով առողջ լաւատեսութեան մասին և, թուում է, այդ տեսակէտից բաւական քիչ աշխոյժութիւն ունեցայ։ Գուցէ ես աւելի մեծ համակրանքի հանդիպեմ, եթէ ասեմ, որ Մերձաւոր Արևելքի գործերում մենք ամենից առաջ պէտք է զեկավարվենք առողջ էգոիզմով։ Հաւատացէք, այդօրինակ առողջ էգոիզմը վերջում օգտակար կը դառնայ ոչ միայն Ռուսաստանի, այլ և այն բոլոր բալկանեան պետութիւնների և ժողովուրդների համար, որոնք յանձին մեր իրանց բնական բարեկամներն և պաշտպաններն են տեսնում և որոնց համար ուժեղ և առաջադէմ Ռուսաստանի գոյութիւնը անհրաժեշտ է։ Առողջ էգոիզմը ոչ միայն հակադիր չէ ազգային քաղաքականութեան հակացողութեան, այլ նրա առաջին հրամայողական պայմանն է հանդիսանում։ Ես խորապէս համոզված եմ, որ հէնց այդպիսի առողջ էգոիզմը, մեր այժմեան պատմական բոպէին, ռուս ժողովրդի միանգամայն պարզ ըմբռնելի և անվիճելի պահանջ կը հանդիսանայ։ (Մափահարութիւններ)։ («Հ. Դ.»)

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 13 մարտ

Այլանդակութիւն...

Մխայն այդ բառով կարելի է բնորոշել այն խղճալի և ողորմելի դրութիւնը, որի մէջ ներկայումս գտնվում են Ախալցխայի երկսեռ դպրոցները իրանց 300 երկսեռ աշակերտներով և քանիից աւելի ուսուցիչներով։

Առաջադիմական գաղափարների դիմակով քողարկված տեսուչ պ. Ց. Իսուֆեանը 1874 թ. դպրոցական կանոնադրութիւնը զէնք ունենալով մի զզուելի պետական դիկտատորի դեր է վերցրել իր վրա։ Վաղուց է, որ մանկավարժական ժողովներ գոյութիւն չունեն մեր դպրոցներում։ դրա փոխարէն դէսպոտական ոգով շարադրած աղդերն են, որ շատ յաճախ երևում են ուսուցչանոցի պատերի վրա։ Ագդեր, որոնց միջի պահանջածների համար մանկավարժական ժողովները թերևս մի քանի նիստեր կը նուիրէին պարզաբանելու և ընդունելու կամ չընդունելու համար։

Սակայն դէսպոտիզմը ուրիշ կերպ չէ էլ կարող վարվել։ դուրսը իրաւունքների հասարեցում քարոզել, իսկ դպրոցում իրաւունքների ոտնահարում։

Իսկ երբ բողոքող ուսուցիչը չէ ուզում, որ իր իրաւունքները ոտնահարվեն մի տեսչի կողմից, իսկոյն դրա դիմաց կախվում է լրացուցիչ աղդը հանդերձ սպառնալիքներով։ Ահաւասիկ նմուշները. «Ով որ աշակերտներին իր առարկայից երեք կատեգորիաների չը բաժանի, նա ռոճիկ չի ստանայ. ով որ կիսամեայ ծրագիր չը ներկայացնի, նա նոյնպէս ռոճիկ չի ստանայ. ով որ քարտուղար է եղել *) և արձանագրութիւն չը ներկայացնի, դարձեալ ռոճիկ չի ստանայ», և այլն և այլն։

Եւ այս բոլորը պ. Իսուֆեանի մանկավարժական փորձառութեան արգասիքն է, որ պարոնը իր երկար տարիների ուսուցչական փորձառութեամբ ձեռք է բերել, երևի, Տրապիզոնում։

Կամ արդեօք 74 թ. կանոնադրութեան մէջ այդ տեսակ իրաւունքներ տեսչին տրված, կամ արդեօք այդ կանոնադրութեան մէջ, որ 23 ուսուցիչ պիտի քահանայի առարկայ լինեն մի անհատի։ Մի՞թէ սա վիրաւորանք չէ մի ուսուցչական խմբի համար, որ մի դպրոցում ծառայում են և իրաւունքներից զրկված են դպրոցական գործերը իրանց քննութեան նիւթ դարձնելու։ Ինչու՞ պ. Իսուֆեանը խոյս է տալիս մանկավարժական ժողովներ գումարելուց. մի՞թէ այդ ազդերից են կախված դպրոցների առաջադիմութեան գործը։

Ողբալի տեսչութիւն, արգահատելի դպրոցներ...

Վերջապէս թող յիշի պարոնը, որ տարվայ սկզբից, ուսուցչական խմբի կողմից նա իսպառ անվստահելի է յայտարարված գրաւոր կերպով, որից յետոյ, եթէ պ. Իսուֆեանը պատուի զգացմունք ունէր, անմիջապէս հրաժարվելու էր պաշտօնից բայց... բայց... հէնց այս բայցերն են այսօր կոշտարի պէս սղո�ում մեր կոկորդը։

Ախալցխ. երկս. դպ. ուսուցիչ՝

Գէորգ Յովսէփեան

—

Թիֆլիս, 8 ապրիլի

Թիֆլիսից բացակայ եղած ժամանակս «Վտակի» № 74-ում տպված է, թէ պ. Ա. Ահարոնեանը ընտրված լինելով, իր բացակայութեան ժամանակ, անդամ կաթողիկոսական յանձնաժողովի, յայտնել է ինձ, իբր ժողովի նախագահի, որ հրաժարվում է յանձնաժողովի անդամութիւնից։

Իսկ «Մշակի» № 76-ում, «Մաժուլ» վերնագրով բաժնում, այս հրաժարականի առիթով գրված է հետևեալը. «Կուսակցութեան պատկանելը այն անյարմարութիւնն ունի, որ մարդիկ չեն կարողանում ազատ մնալ իրանց հաժդմունքների մէջ, այլ հարկ են տեսնում անհատականապէս իրանց քարոզածը կուսակցականապէս ժըխտել։ Եւ, երևի, այդ անհրաժեշտութեան արդիւնք պէտք է համարել այն հերքումը, որ «Վտակ» թերթը տալ է իբրև հաստատ աղբիւրից, թէ պ. Ա. Ահարոնեանը հրաժարվել է յանձնաժողովի անդամութիւնից»։

Ես, իբր նախագահ յիշեալ ժողովի, որը տեղի ունեցել մարտի 23-ի երեկոյեան, բօրայի դահլիճում, հարկ եմ համարում հաստատել առաջին, որ պ. Ահարոնեանի ընտրութիւնը, արդարև, կատարվել է նրա բացակայութեան ժամանակ, ժողովի վերջը, երբ նա հեռացել էր ժողովից, և երկրորդ, որ նա հէնց միւս օրը, առաւօտը, պատահելով ինձ հետ և ինձանից խնդալով, որ ընտրվել է յանձնաժողովի անդամ, յայտնեց, որ հրաժարվում է յանձնաժողովի անդամութիւնից, որովհետև շատ զբաղված է և անկարող է մասնակցել յանձնաժողովի աշխատանքներին։

Ս. Ցարութիւնեանց

Ի Մ Ա Ս Ե Լ Ի Ջ Ը **)

(Նամակ խմբագրութեան)

—

Իր «Վերջին խօսք» պատասխանի մէջ պ. Ego սպառում է, ըստ երևոյթին, հայհոյանքների իր վերջին պաշարը։

Հայհոյանքը միայն արհամարել կարելի է։ Մենք անցնենք բուն խնդրին։

Մեր հակառակորդը դրված է մի հոգեբանական դրութեան մէջ, ուր նա աշխատում է հայհոյանքներով, սպառնալիքով և անուան մատնութեամբ «վախեցնել» կամ «լռեցնել» իր հակառակորդին։

Նա գիմեց պոլեմիկական այդ մեթոդին իր երեք «պատասխանների» մէջ։ Մեր արած այնքան մերկացումներից—իրանց օրգանների վկայութեամբ հաստատած փաստերի մերկացումներից—և ոչ մի կէտին չը պատասխանեց պ. Ego։ Նա խոյս տուեց այդ բոլորից և իր «Վերջին խօսքի» վերջին էջն այն է միայն, որ նա իմանայ, թէ ով է կեղծիքների աղբիւր-հեղինակը իրանց շարքերից։

Ո՛չ յարգելի պարոն։ Մենք այդքան հեշտութեամբ բաց չենք թողնի ձեր օձիքը։ դուք դեռ հրապարակաւ պարտ ունիք հատուցանելու մեր և հասարակութեան առաջ, երբ մի անգամ արդէն ստանձնել էք ադվոկատի դեր։

Պ. Ego, դուք պէտք է մէկիկ-մէկիկ և փաստացի հիմքերով պատասխանէք հետևեալ կէտերին, որոնց վրայով սահում անցնում էք մինչև այժմ, բայց որոնք չափազանց արժէքաւոր են։

Ահա այդ կէտերը.

1) Դաշնակցութիւնը յայտարարեց («Մարիսխ» № 30, 38 և ուրիշ տեղեր), որ իբր ինքը ընդունվել է միջազգային սոցիալիստական բիւրոյի կողմից պաշտօնապէս, որպէս մի բարձր ու հեղինակաւոր ժարմնից։

Բիւրոյի սեկրետարից ստացած պաշտօնական գրութեան հիման վրա մենք հերքեցինք դաշնակցական թերթերի այդ աշկարա սուտն ու կեղծիքը, ցոյց տալով, որ միջազգ. սոց. բիւրոն բացարձակապէս ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել ձեր ընդունելութեան (ռուսահայ հատուածի) հարցում, այլ ձեզ ընդունել է միայն ռուսական ազգային սեկցիան։

Այժմ մենք պահանջում ենք ձեզնից, պ. Ego, նորից չը փախչել, այլ պարզ ու որոշակի արտայայտվել այս կէտի առիթով առանց կալամբուրների և կոշ ու աղաղակի, կամ փաստերով ցոյց տալ ձեր թերթերի յայտարարութեան ճշտութիւնը, հետևապէս մեր և բիւրոյի սեկրետարի կեղծիքը, կամ թէ չէ հաստատել մեր ասածը և խոստովանել, որ «Մարիսխ» լրագիրը սուտ ու կեղծել է։

Երկուսից մէկը։

2) Դաշնակցական օրգանները և ինքը պ. Ego-ն կուսակցական ծառայութիւն հասարեցին՝ յաղթական բնոյթ տալու հաստատ իրանց կենդրեսային ընդունելութեան փաստին, ակներեւ շահագործելով մի այնպիսի սոցիալիստի անուն, ինչպէս Ժան Ժորէսն է։ Զէ՞ որ հայ սոցիալ-դեմոկրատներին աւելի «կը վարկաբեկեն» նրանք մասսայի աչքում, երբ յայտարարեն, որ «Դաշնակցութեան բարեկամ» է Ժորէսը («Մարիսխ» № 38), որ նա՝ հայ և ռուս սոցիալ-դեմոկրատների հակառակ, հաժակրութեամբ է վերաբերվել դէպի Դաշնակցութեան ընդունելութիւնը, մինչ այն ասուած, որ, ըստ պ. Ego-ի, Ժորէսը «վրդովմունքի ժեստով վերջ տուեց ապաստակի առարկութիւններին» (№ 2 «Արօր», Դաշնակց. ընդունելութեան մասին, բիւրոյի նիստում)։

Մենք ցոյց տուինք մեր նախկին յօդուածի և վերջին պատասխանի մէջ, որ դա մի զարհուրելի կեղծիք է, մէ առասպելական յիրիւրանք, ասիական обывательство։ Մենք ցոյց տուինք, որ պ. Ego-ն ոչ միայն ամենասպառիչ կերպով Ժորէսի բերանն է դնում չարաստանած, չեղած խօսքեր, այլև խօսեցնել է տալիս նրան այն խնդրի շուրջը (ռուսահայ հատուածի մասին), որի առիթով Ժորէսը մի խօսք, մի վանկ, հասկանում էք, մի տառ անգամ չէ արտասանել։*)

Մենք ամենակաթեգորիկ կերպով պահանջում ենք պ. Ego-ից՝ կամ խոստովանել, որ ինքը չարաչար կեղծել է Ժորէսի վերաբերմամբ իր ասածների մէջ, կամ ապացուցել կոնկրէտ փաստերով՝ ա) որ իր յիշածը Ժորէսի հարազատ խօսքերն են և բ) որ Ժորէսը խօսել է ճիշտ այն հարցի մասին, ինչպէս ինքն է յիշել։

3)— Աւելի վիրաւոր կէտը։ Անհրաժեշտ էր, որ Դաշնակցութիւնը (ռուսահայ հատուածը) ընդունվելու համար հաստատութիւն ստանար նաև սոց.-դեմ. ենթասեկցիայից, բացի ս. դ.-ականից։ Այդ, անհրաժեշտ էր. դրա դէմ չէ վիճում նաև Ego-ն. դա ընդունելութեան ստատուտների մի խնդիր է։ Սակայն այստեղ հարց է ծագում իր հանելուկային բնաւորութեամբ. ինչպէ՞ և ինչպէ՞ս եղաւ, որ սոցիալ-դեմոկրատական ենթասեկցիան տուեց իր համաձայնութիւնը, քանի որ նա լաւ է ճանաչում Դաշնակցութեան ֆիզիոնոմիան. քանի որ նա և կուսակցութեան կենտր. կոմիտէն միաժամանակ դրժել են Դաշնակցութեան նման կազմակերպութիւնների — հրէական սիոնիստ սոցիալիստների և հրէական սոց. քանակուսակց.—դիմումները. քանի որ նոյնիսկ դաշնակցական թերթերի վճռական պնդումով (տես «Մարիսխ» № 38-ի առաջնորդող և Շառուգարդից գրված թղթակցութիւնը. «Արօր» № 2-ի պ. Ego-ի յօդուածը և նոյն պարոնի նախաբերջին գրութիւնը «Վտակ» № 17-ում) ռուս սոցիալ-դեմոկրատները ոչ միայն բարեացակամ չեն դէպի Դաշնակցութիւնը, այլ և թշնամական լարված յարաբերութեամբ ամեն անգամ արգելք են հանդիսանում նրա առաջ։

Պ. Ego-ն բիսկ չէ արել այս խնդրի նոյն իսկ կեղեը շօշափելու։ Բայց մենք պահանջում ենք այժմ ամենակաթեգորիկ կերպով

*) Մինչև զեկտմբեր քարտուղարութիւնը հերթով և ձիրաքար տարել են մի քանի ուսուցիչներ։

**) Պ. Ego-ն նկատում է, որ իբր «Մշակի» խմբագիրները տեսնելով, որ «շատ հեռու է գնում իրանց աշխատակիցը», տպել են մեր պատասխանը իբրև «Նամակ խմբագրութեան»։ Փոքր ինչ ներքև նկատում է նոյն Ե.-ն, որ իբր մենք մեղմել ենք մեր թափը նրան ուղղած պատասխանի մէջ։

Սրան արդէն լարտիներին ասում են contradictio in adjecto—նախադասութեան մի մասը հակասում է միւս մասին։ Բացի նը. բանից, որ պ. Ե. թեթևամտօրէն տենդենցիոզ բացատրութիւն է տալիս «Մշակի» խմբ. վերաբերմունքին, այլ և գործում է տրամաբանական մի անմտութիւն։ Եթէ ես «շատ հեռու» եմ գնացել իմ պատասխանի մէջ, անկարելի է որ ես միաժամանակ «մեղմած լինեմ իմ թափը» ձեր դէմ. իսկ եթէ ես «մեղմել եմ իմ թափը», նշանակում է շատ հեռու չեմ գնացել իմ պատասխանի մէջ, eo ipso չէր կարող վերջին հանգամանքը մտրիվ ծառայել «Մշակի» խմբագր. համար պատասխանը զետեղելու «Նամակ խմբագրութեան»։ Տրամաբանական հետևողականութեան դէմ մեղանչելը ոչ թէ բացառութիւն, այլ սովորական կանոն է Ego-ների համար։—Եւ վերջապէս ինչ կողմնակի աւելորդաբանութիւններ, անմիտ ու դատարկ էֆէկտներ են սրանք, որոնցով—այո միայն դրանցով—աշխատում է պ. Ego մեզանցնել ինդիրը և շշմեցնել ընթերցողին։

*) «Մարիսխը մի թերթաբակն առնով հաստատում էր, որ Դաշնակցութեան թիւրքահայ հատուածի—հայ ազգային սեկցիայի—ընդունելութիւնը յետաձգվել է Ժորէսի առաջարկով մինչև վեց ամիս։ Այժմ արդէն թերթերը ասում են. հետաքրքիր էր իմանալ, թէ հետևանք ունեցաւ պրոֆեսորնալ կեղծողների վեց ամսվայ կեանքը ունեցաղ այդ բացարձակ սուտը...

ծանրանալ վերջապէս այդ խնդրի վրա և քրքրել նրա հանելուկային բնոյթը։

Ահա այդ է խնդրի ժութ ու վիրաւոր կողմը, որի վերլուծումից ձեզ կը պարզվի իրողութիւնը իր բոլոր յատկութեամբ։

Մենք ասել ենք և պնդում ենք այժմ նոյնը, որ սոց.-դեմ. ենթասեկցիան զոհ է գնացել թիւրիմացութեան *). Նա տուել է իր համաձայնութիւնը, հաւատացած լինելով որ Դաշնակցութիւնը ունեցել է իր փաստական ներկայացուցչութիւնը Ամստերդամում, սխալմամբ հնչեականների մասնակցութիւնը վերագրելով Դաշնակցութեան։ Մեզ հաժար կատարված իրողութեան կարևորութիւնը կայանում է նրանում, որ Դաշնակցութեան ընդունելութիւնը լոյալ ճանապարհով չէ եղել, որ եթէ սոց.-դեմ. ենթասեկցիան թիւրիմացութեան մէջ չընկներ, նա նոյնպիսի վճռականութեամբ կը մերժէր ձեր կուսակց. դիմումը, ինչպէս մերժել էր նմանօրինակ մանր բուրժուական նացիոնալիստական մարմինների դիմումը։ Եւ այդ մերժման հետևանքը կը լինէր... ձեզ յայտնի է թէ ինչ։ Դաշնակցութիւնը ոչ միայն վաղօրօք կոնդրես չէր հրաւիրվի, այլ սիօնիստ սոցիալիստների նման դուք ևս նախ բիւրօյի դռները պիտի մաշէիք... Ուրեմն շնորհիւ մեր ռուս ընկերների անհրաժեշտութեան և այնքան հեշտութեամբ թիւրիմացութեան զոհ գնալուն, Դաշնակցութիւնը, պ. Ego, ունեցաւ իր Schweinglück-ը։

Ունէք դուք այլ բացատրութիւն տալու 3-րդ կէտի նկատմամբ,—համեցէք։ Ցանկալի դէպք կարևորն ու արժէքաւորը աւելի շուտ այդ բացատրութիւնը կը լինէր, քան աւելորդ ու անտեղի ոստիկանական խուզարկութիւնը։

Կրկնում ենք մեր պահանջը. դուք պարտաւոր էք տուածս երեք կէտերին մէկիկ-մէկիկ պատասխանելու՝ ապացուցելով մէկը կամ միւսը առաջադրված երկընտրանքից։ Միայն այդ դէպքում կը ստանաք դուք ժեղնից լրացուցիչ բացատրութիւններ։

Այս է իմ ասելիքը։

15 մարտի Bolt

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

9 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման զինուորական վարչութեան անունով։ Այս նոր հրամանի համաձայն Ուլանսկի և Հուսարսկի գնդերի զգեստների ձևը փոխվում է։ Նոսաբ և օբեր-օֆիցերներին թոյլատրվում է հէնց այժմ և եթ կրել նոր զգեստները, իսկ հները մաշել մինչև 1910 թուի յունվարի 1-ը։

Ժամանեց արտասահմանից Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորօվնան։

ԵՆԼՍՆ։ Վախճանված զեն.-ադիւտ. կոմս Շուվալովի մարմինը ուղարկվեց հայրենի կալուածքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրի նախագահութեամբ գործող միջվարչական մասնաժողովը ընդունեց գօնեան պոլիտեխնիքական ինստիտուտի կանոնադրութիւնը, որ մշակել է լուսաւորութեան մինիստրութիւնը։

Ա ր տ ա ք ի ն

ՍՏՕԿՀՕԼՄ։ Ապրիլի 16-ին Բեվէլ կը մեկնէ թագաւորը «Սսկար» զրահանաւով։ 15-ին կը մեկնէ պրինց Վիլհելմը։

ՀԱԼՍ։ «Տրիբունան» Իզվոլսկու ճառը շատ կարևոր է ընդունում և շնորհակալութիւն է յայտնում Իզվոլսկուն նրա համար, որ բացարձակօրէն խոստովանեց Իտալիայի վարքի լոյալ գրութիւնը և նրա հետ միասին աշխատելու նշանակութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Բէյտերի գործակալութեան Տոկիօից հեռագրում են, որ Պեկինի եպիսկոպական դեսպան բարօն Հայիաշուն պատուիրագրված է վերադառնալ Տոկիօ. նրա յաջորդ նշանակված է Լօնդոնի եպիսկոպական դեսպանատան խորհրդատու Իջուինը։ Արտաքին գործերի մինիստրի օգնական բարօն Զինդի փոխարէն, որ Բերլինի դեսպան է նշանակված, նշանակված է բարօն Իջի։

*) Պ. Ego-ն ռամկական միամտութեամբ տալիս է սի աւելորդ հարց, որ նա անկասկած կը խնայեր, եթէ ուշադրութեամբ կարդար սեր առաջին յօդուածը։ «Ի՞նչպէս եղաւ,—ասում է նա ծանօթութեան մէջ,—որ Շու